

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Նախագծային աշխատանք՝ Մաթեմատիկական խաղեր և խաչքառեր

Կոտայքի մարզ, Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց

VII Բ դասարան

Ուսուցչուհի՝ Գայանե Արշալույսի Դավթյան

Մասնակից աշակերտներ՝

1. Դավիթ Աբրահամյան
2. Մարատ Գինոսյան
3. Էդուարդ Գրիգորյան
4. Միլենա Դավթյան
5. Սոնա Համբարձումյան
6. Ալվարդ Հայրապետյան
7. Վահե Հարությունյան
8. Վաչե Հովակիմյան
9. Էլինար Հավաննիսյան
10. Նաիրի մաթևոսյան
11. Սյուզաննա պողոսյան
12. Արամ Սարգսյան
13. Դավիթ Տիգրանյան
14. Սիմոն Քոչարյան:

Ապրիլի 12-ից մինչև մայիսի 17-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել են նախագծային ուսուցում « Մաթեմատիկական խաղերի և խաչքառերի գրքուկի ստեղծում» թեմայով:

Այս նախագծի նպատակն էր՝

1. տրամաբանական մտածողության զարգացումը
2. մեծացնել սերը և հետաքրքրությունը մաթեմատիկայի նկատմամբ
3. զարգացնել սովորել սովորելու կարողությունը
4. սովորել հոր բան ստեղծել թիմի հետ համագործակցելով

Նախագիծն իրականացնելու համար նախատեսված էր 6 շաբաթ:Սովորողները սեղեկություններ հավաքեցին մաթեմատիկական խաչքառերի և խաղերի մասին:Այնուհետև կատարվեց աշխատանքի բաժանում:Յուրաքանչյուրը հստակ

գիտեր, թե ինքը ինչ է անելու առանց ստեղծագործելու հնարավորությունները սահմանափակելու: Եղան աշակերտներ, որ ցանկություն հայտնեցին տարբեր տեսակի աշխատանքներ կատարել: Նրանցից յուրաքանչյուրը գոնե մեկ խաղի կամ խաչբառի հեղինակ դարձավ: Նաիրի Մաթևոսյանը հանձն առավ աշխատանքները լուսաբանելու աշխատանքը և վերջում ներկայացրեց փոքրիկ սահիկաժար: Էլինարը և Սիմոնը կատարեցին համակարգչային ձևավորման աշխատանքներ: Սոնան օգտագործեց իր նկարչական տաղանդը և ձևավորեց գրքույկի կազմը: Իսկ Սյուզաննան ինֆնակամ հանձն էր առել բոլոր կազմակերպչական հարցերի կարգավորումը:

Սովորողներն աշխատում էին մեծ ոգևորությամբ: Ամեն հանդիպման գալիս էին նոր առաջարկներով: Գրքույկը կազմվել է աշակերտների ձեռքերով, ինչպես Դավիթը Տիգրանյան ասեց ձեռակերտ է: Սովորողները տեսան և համոզվեցին, որ մաթեմատիկան կարող է լինել զվարճալի, հետաքրքիր: Նախագծային աշխատանքը ներկայացնելուց հետո ծավալվեց բննարկում, որի արդյունքում հնչեցին հետաքրքիր առաջարկներ և գնահատվեց կատարված աշխատանքը որպես տարբերվող և յուրահատուկ: Բոլոր աշակերտներն արել են իրենց հնարավորությունների առավելագույնը և գնահատվել են ‘‘9’’ գնահատականով: